**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ, ՏՐԱՆՇ 4, ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (ՀՕՏԾ) ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ և ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՃԴ-ԳՀԾՉԲ-2025/04**

ք. Երևան «29» սեպտեմբերի, 2025թ.

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արկադի Չերչինյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ.ԷՄ.» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կառլեն Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) շրջանակներում ազդակիր հողամասերի մանրամասն չափագրման հետազոտության և գույքագրման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված - աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **33,700,000 (երեսուներեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի զանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

ՀՎՀՀ՝ 02702598

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

ՀՀ՝ 900000909961

Գործադիր տնօրեն

_______________

Ա. Չերչինյան

/ստորագրություն/

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ԷՅ.ԷՄ» ՍՊԸ**

Հասցե՝ ք.Երևան, Եկմալյան 6, Բիզնես պալէ, 4-րդ հարկ

ՀՎՀՀ՝ 00117479

Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

ՀՀ՝ 220593330107000

Տնօրեն

_______________

Կ. Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 1*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*ՃԴ-ԳՀԾՁԲ-2025/04 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 71311111/504 | Համաձայն Հավելված 1.1-ի | դրամ | 33,700,000 | 1 | Կատարողը նշված ծառայության մատուցումը իրականացնում է Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածում, իսկ արդյունքները ներկայացնում է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին: | Ծառայությունների մատուցումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը՝ առավելագույնը 12 ամիս տևողությամբ: |

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից: Յուրաքանչյուր տարվա ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 02702598
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ՝ 900000909961
Գործադիր տնօրեն

Ա. Չերչինյան
/ստորագրություն/Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ԷՅ.ԷՄ» ՍՊԸ**

Հասցե՝ ք.Երևան, Եկմալյան 6, Բիզնես պալե, 4-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 00117479
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ՝ 220593330107000
Տնօրեն

Կ. Գևորգյան
/ստորագրություն/Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*ՃԴ-ԳՀՕՁԲ-2025/04 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) շրջանակներում ազդակիր հողամասերի մանրամասն չափագրման հետազոտության և գույքագրման» ծառայությունների ձեռքբերման**

| | |
|---|---|
| *Ծրագրի անվանումը* | Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4 Սիսիան-Քաջարան ճանապարհահատված |
| *Ֆինանսավորման աղբյուր* | Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատված |
| *Ծրագրի Պատվիրատու* | Ծրագիրն իրականացնող գործակալությունն է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, որը հանդես է գալիս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անունից |
| *Ծառայությունների անվանումը* | Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) շրջանակներում ազդակիր հողամասերի մանրամասն չափագրման հետազոտության և գույքագրման ծառայություններ |
| *Ճանապարհի անվանումը* | Մ-2, Երևան – Երասխ – Նորավան - Տաթև - Կապան – Մեղրի - Հայաստան-Իրան սահման |
| *Հատված* | Սիսիան - Շենաթաղ, 27 կմ (Հյուսիսային հատված)<br>Բարգուշատի թունել, 8.6 կմ (Թունելի հատված)<br>Բարգուշատի թունելի հարավային պորտալ – Քաջարան, 24 կմ (Հարավային հատված) |
| *Ծառայության տեսակը* | ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերի մանրամասն չափագրման հետազոտության և գույքագրման ծառայություններ |
| *Ծրագրի նախապատմությունը* | Ասիական զարգացման բանկը (այսուհետ՝ ԱԶԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկը (այսուհետ՝ ԵՆԲ) և Ֆրանսիայի կառավարությունը համաձայնել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրել վարկ՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման նպատակով՝ կառուցելով եռուղի երթևեկելի ճանապարհ՝ Մ2 ավտոճանապարհի Սիսիան – Քաջարան 51 կմ և Բարգուշատի թունելի 8.6 կմ հատվածը: Հողերի օտարման և շինությունների ապամոնտաժման առումով Ծրագիրը զգալի ազդեցություն կունենա: Հողերի օտարման և տարաբնակեցման (այսուհետ՝ ՀՕՏ) ծրագիրը մշակվել է ՎԶԵԲ Խորհրդատուի կողմից՝ Ծրագրի ՀՕՏ-ը պլանավորելու և իրականացնելու համար: Նշված ՀՕՏԾ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի իրավակարգավորումների և ընդունված միջազգային ՀՕՏ ստանդարտների ու սկզբունքների վրա: Սույն ՀՕՏԾ-ի ընդհանուր անվտանգության ապահովման պատասխանատվությունը կրում են և՛ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ), և՛ ԱԶԲ-ն, և՛ ՎԶԵԲ-ը, և՛ ԵՆԲ-ն:<br>Տրանշ 4, Սիսիան – Քաջարան հատվածի ՀՕՏԾ իրականացումը մեկնարկել է: ՀՕՏԾ իրականացնող Խորհրդատուն առաջին պետական գրանցման է ներկայացրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը՝ հետագա օտարման գործընթացն ապահովելու համար, ինչպես նաև հանդիպումներ են իրականացվել ազդակիր համայնքների ղեկավարների հետ, սակայն օտարման պայմանագրեր կնքելու գործընթացը չի մեկնարկել, քանի որ իրականացման փուլում հայտնի է դարձել, որ ՀՕՏԾ պատրաստող Խորհրդատուի կողմից ներկայացված գնահատման հաշվետվություններում արձանագրվել են խախտումներ, որոնք բերել են գնահատված |

կազմակերպության գնահատող մասնագետը զրկվել է գնահատողի որակավորման վկայականից՝ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ուղղված N ՄԹ/18956-2024 գրության համաձայն: Միևնույն ժամանակ ՀՕՏԾ պատրաստող Խորհրդատուի կողմից ներկայացված ազդակիր գույքերի գնահատման փաթեթների մեջ[2] հայտնաբերվել են այլ թերություններ, որոնք անհրաժեշտ է ուսումնասիրել և ըստ անհրաժեշտության կատարել համապատասխան ուղղումներ: Ինչպես նաև, ՀՕՏԾ իրականացման ընթացքում Ծրագրի բողոքների լուծման մեխանիզմների (այսուհետ՝ ԲԼՄ) շրջանակներում ազդեցության ենթարկված անձանց (այսուհետ՝ ԱԵԱ) կողմից ներկայացվել են դիմում-բողոքներ, որտեղ իրենց անհամաձայնությունն են հայտնել նկարագրության արձանագրությունների մեջ նշված ազդակիր գույքերի որակական և քանակական տվյալների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերի (շենք/շինությունների, բարելավումների) չափագրում, գույքագրում, ինչպես նաև գնահատման փաթեթներում առկա թերությունների ուղղում/վերացում:

Այդ նպատակով, անհրաժեշտ է ձեռք բերել որակավորված Կազմակերպություն՝[3] ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերը (շենք/շինությունները, բարելավումները) չափագրելու, գույքագրելու և գնահատման փաթեթներում առկա թերությունները ուղղելու/վերացնելու համար:

*Առաջադրանքի նպատակը և ծառայությունների շրջանակը*

Ծառայությունների շրջանակը ներառում է 400 հողամասերի մանրամասն չափագրում[4] (ներառյալ շինություններ, բարելավումներ), 135 հողամասերի նկարագրության արձանագրությունների կազմում[5], ՀՕՏԾ տվյալների բազայի թարմացում, սակայն միայն չի սահմանափակվում սույն առաջադրանքի շրջանակներում ակնկալվող ծառայությունների, տվյալների և արդյունքների ձեռքբերմամբ: Հողերի օտարման և տարաբնակեցման հետ կապված բոլոր ակնկալվող ծառայությունները պետք է համապատասխանեն Ծրագրի Տրանշ 4, Միսան-Քաջարան ճանապարհահատվածի համար մշակված Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակում (այսուհետ՝ ՀՕՏՇ) մեթոդաբանություններին և սկզբունքներին: Առաջադրանքը ունի 1 հիմնական նպատակ՝ իրականացնել ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերի մանրամասն չափագրման և գույքագրման հետազոտություն, որը կարտացոլի ազդակիր հողամասերի ներկայիս իրավիճակը, ինչպես նաև հնարավորություն կտա պատշաճ կերպով իրականացնել հողերի օտարման գործընթացը:

Առաջադրանքի նպատակն է ճշգրիտ կերպով չափագրել և գույքագրել ՀՕՏԾ ազդեցությունների չափը, (այսինքն՝ ինչ տեսակի կորուստներ են նրանք կրելու, և դրանց որակական և քանակական ծավալները):

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անունից հանդես է գալու որպես պատվիրատու Սոցիալական անվտանգության մեխանիզմների ապահովման աջակցության ծառայությունների պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ «Պատվիրատու»): Պատվիրատուին անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցող տեղական կազմակերպություն՝ իրականացնելու ազդակիր հողամասերի ՄՉՀ և գնահատում՝ հետևելով ԵՆԲ ԲՍՍՀ, ՎԶԵԲ ԲՄՔ ԿՊ 5 ու ԱԶԲ ԱՄՔ (2009) փաստաթղթերին և ուղեցույցերին, ՀՀ օրենսդրությանը ու Ծրագրի վերջնական մանրամասն նախագծին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ՀՕՏԾ իրականացումը և դրան հաջորդող շինարարական աշխատանքների մեկնարկի թույլտվությունները տրամադրվելու են 4 փուլով, ապա ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ստորև աղյուսակում նշված փուլերի սկզբունքով.

---

[2] Գնահատման փաթեթների մեջ ներառված են ոչ միայն ազդակիր գույքերի գնահատման հաշվետվությունները, այլ նաև մանրամասն չափագրման տվյալները՝ բաժանման սխեմաներով, նկարագրության արձանագրությունները, անհրաժեշտ տեղեկանքներ, ազդակիր անձանց անձնագրային տվյալներ և այլ օտարման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

[3] Որակավորված Կազմակերպությունը «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետք է հաշվառված լինի ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից վարվող՝ գնահատման գործունեություն իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների անվանացանկում:

[4] 400 հողամասերը կազմում են ընդհանուր 581 հողակտորների մոտավոր 69%-ը, որոնց ՀՕՏԾ պատրաստող Խորհրդատուի կողմից ներկայացված փաթեթները պարունակում են թերություններ:

[5] 135 հողամասերը կազմում են ընդհանուր 581 ազդեցության ենթարկված հողամասերի 23%-ը:

**ՀՕՏԾ իրականացման և շինարարական աշխատանքների մեկնարկի փուլեր**

| Փուլ | Նախատեսվող ճանապարհի պիկետ | | Հողերի քանակ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | Սկիզբ | Ավարտ | | |
| 1 | 1+000 | 10+750 | 59 | Հյուսիսային հատված |
| 2 | 17+500 | 27+150 | 119 | Հյուսիսային հատված |
| 3 | 0+000 | 1+000 | 310 | Հյուսիսային հատված |
| | 10+750 | 17+550 | | |
| 4 | 35+800 | 60+022 | 93 | Հարավային հատված |
| | | Ընդհանուր | 581[6] | - |

Վերոնշյալ առաջադրանքների իրականացման նպատակով ծառայությունները մատուցվելու են պայմանագրի կնքմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում:
Ծառայությունների մատուցման պայմանագիրը ակնկալվում է մեկնարկել 2025թ. սեպտեմբեր ամսից:

***Հիմնական պարտականություններ և պահանջները***

Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ՀՕՏԾ շրջանակներում Ծառայություններ մատուցողը/Կատարողը պատասխանատվություն է կրում ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր գույքերի չափագրման և գույքագրման աշխատանքների իրականացման համար: Մասնավորապես, Կատարողը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.
ՀՕՏԾ տվյալների թարմացում.

1) Ուսումնասիրել ճանապարհի ծրագրի կադաստրային փաստաթղթերը, համեմատել Մանրամասն չափագրման հետազոտության (այսուհետ՝ ՄՉՀ) փաստացի արդյունքները և կադաստրային տվյալները, հայտնաբերել շեղումները կադաստրային քարտեզներում (առկայության դեպքում) և տրամադրել խորհրդատվություն՝ նմանատիպ յուրաքանչյուր դեպք ուղղելու նպատակով ներկայացված համապատասխան հատակգծի հնարավոր լուծումների վերաբերյալ:
2) Իրականացնել ՄՉՀ, կորուստների գույքագրում և գնահատում:
3) Իրականացնել ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (այսուհետ՝ ԱԵՏՏ-ներ) 20%-ի մարդահամար:
4) Հավաքագրել ԱԵԱ-ների և իրենց գույքի հետ առնչվող բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ՀՕՏԾ իրականացման համար:
5) Պատրաստել գույքի/ակտիվների նկարագրության արձանագրությունները և կազմակերպել դրանց ստորագրումը ԱԵԱ-ների և Հիմնադրամի կողմից: Աջակցել Հիմնադրամին ստորագրված արձանագրությունների մասին ծանուցումները պատրաստելու համար:
6) Ամբողջ հավաքագրված տեղեկատվության հիման վրա թարմացնել ՀՕՏԾ տվյալների բազան:

ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերի և դրանց վրա առկա բարելավումների գնահատման և գնահատման փաթեթներում առկա թերությունների ուղղման/վերացման համար նախատեսված են հետևյալ հատուկ առաջադրանքները.

*I. Մարդահամար*[7]

1. Պատրաստել և պարբերաբար թարմացնել ազդեցության ենթակա գույքի ցուցակը՝ ըստ նույնականացման համարների, դրանց քանակի, հասցեների, սեփականատերերի, չձևակերպված կամ անօրինական օգտագործողների անունների, պայմանագրի տվյալների և կորուստների տեսակների: Այս առաջադրանքը պետք է իրականացնել տեղական մարմինների հետ սերտ համագործակցությամբ:
2. Լրացնել մարդահամարի հարցաթերթիկը ընտանիքի ամենատեղեկացված անդամի

---

[6] Այստեղ ներառված են ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր բոլոր հողամասերը, սակայն ծառայությունները մատուցվելու ծառայությունների շրջանակում ներառված աշխատանքների տեսակների և դրանց քանակների համապատասխան բաշխումով՝ ըստ փուլերի: Նշված քանակը ներառում է նաև ՀՀ սեփականություն հանդիսացող հողակտորներ, որոնց համար չափագրման և գույքագրման փաթեթներ չեն ներկայացվելու, եթե դրանց վրա առկա չեն օգտագործումներ:
[7] Մարդահամարը կիրականացվի այն դեպքում, եթե ՄՉՀ ընթացքում կհայտնաբերվեն այնպիսի ՏՏ-ներ, որոնք ներառված չեն

հետ: Եթե ազդեցության է ենթարկվում իրավաբանական անձ (օրինակ՝ ՓԲԸ, ՍՊԸ, գործընկերություններ, կոոպերատիվներ և այլն), ապա հավաքագրել այդ անձանց գործառույթների, անդամակցության և կառուցվածքի վերաբերյալ հիմնական տեղեկատվություն:

3. Եթե տնային տնտեսություն այցելության կամ ամուսիններից մեկի կամ տնային տնտեսության չափահաս անդամի հետ հարցազրույցի ժամանակ ԱԵԱ տանը չի լինում, կատարել առնվազն երկու հեռախոսազանգ՝ ազդակիր տնային տնտեսության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

4. Գրանցել ԱԵԱ-ների պատասխանները կամ հարցումները և տրամադրել կոնտակտային անձի տվյալները՝ բողոքները կամ այլ հարցերը հասցեագրելու համար:

5. Մարդահամարի հետազոտության արդյունքները մուտքագրել Սոցիալական գիտությունների վիճակագրական տվյալների փաթեթ ծրագրում կամ Excel և կազմել ՀՕՏԾ-ի վիճակագրական տվյալների ամփոփ աղյուսակ:

6. Պատրաստել ԱԵԱ-ների հետ իրականացված հարցազրույցների, մարդահամարի իրականացումից դուրս մնացած ԱԵԱ-ների և հարցազրույցներից հրաժարված ԱԵԱ-ների ամփոփ ցանկը,ինչպես նաև՝ հայտնաբերել և ներկայացնել խոցելի տնային տնտեսությունների ցանկը, ստուգել այդ ցանկը համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններում և պետական մարմիններում/գործակալություններում:

7. Իրականացնել լրացված հարցաթերթիկների որակի հսկողություն:

8. Մարդահամարի հարցաթերթիկը կտրամադրվի Հիմնադրամին, իսկ Կատարողը (ըստ անհրաժեշտության) կարող է թարմացնել/փոփոխել այն՝ նախապես խորհրդակցելով և համաձայնեցնելով հարցաթերթիկը Հիմնադրամի հետ:

*II. Մանրամասն չափագրման հետազոտություն*

Իրականացնել փաստացի ազդեցության ենթակա գույքի փաստացի չափագրում, ներառյալ՝ ձևակերպված և ապօրինի օգտագործվող գույքը (մանրամասն նախագիծը կտրամադրվի Հիմնադրամի կողմից, իսկ ընթացիկ կադաստրային քարտեզը/տվյալները պետք է ձեռք բերի Կատարողը):

1. ՀՀ Կադաստրի կոմիտե (ԿԿ) ներկայացնելու նպատակով՝ պատրաստել ազդեցության ենթակա գույքի հատակագիծ/քարտեզ, որը պետք է համապատասխանի ԿԿ-ի նախագահի 08-ը ապրիլի 2021թ. թիվ 75-Ն հրամանով սահմանված պահանջներին: Հիմնադրամին քարտեզները պետք է ներկայացնել թվային PDF և AutoCAD DWG ձևաչափերով:: Վարձակալված հողերի դեպքում պետք է պատրաստել/կցել առանձին հատակագիծ/քարտեզ, որտեղ կարտացոլվի օտարվող գույքի վարձակալված/օգտագործվող հատվածի հարաբերակցությունը:

2. Կադաստրային ուղղումներ պահանջող ազդեցության ենթակա գույքի նախնական և/կամ գրանցում՝ ԿԿ ներկայացնելու համար քարտեզները և այլ առնչվող փաստաթղթերը պատրաստելու նպատակով: Տրամադրել խորհրդատվություն Պատվիրատուին, շահագրգիռ մարմիններին և ԱԵԱ-ներին կադաստրային ուղղումների ընթացակարգի նախաձեռնման ու իրականացման վերաբերյալ: Եթե ՀՕՏԾ իրականացման ընթացքում որոշվի օտարել ոչ միայն ազդեցության ենթակա հատվածը, այլև՝ ամբողջ գույքը, Կատարողը (ըստ անհրաժեշտության), պետք է ներկայացնի ամբողջ գույքի համապատասխան քարտեզը:

3. Տրամադրել չափագրման արդյունքները ներառած ճանապարհային քարտեզ, որի վրա պատկերված կլինեն լռտ-կողերը, սեփականատերերը և շինությունները (եթե առկա են): Տրամադրել չափագրված բոլոր հողակտորների ցուցակը, ներառյալ՝ յուրաքանչյուր հողակտորի սկիզբը (պիկետներով) և ավարտը (կիլոմետրերով), ինչպես նաև ճանապարհային քարտեզին կից պետք է նշել ճանապարհի աջ և ձախ կողմերում գտնվող հողամասերը:

4. Չափագրման արդյունքների հիման վրա պատրաստել ազդեցության ենթակա բոլոր հողակտորների ընդհանուր սխեմա/քարտեզ, որտեղ հստակ կնշվեն ազդեցության ենթակա տարածքները/հողամասերը, որը կկցվի գույքի նկարագրության արձանագրությանը: Այս սխեմա/ քարտեզի ձևաչափը պետք է նախապես համաձայնեցնել Հիմնադրամի հետ:

5. Ապահովել, որպեսզի չափագրումը և գույքագրումն իրականացվի ԱԵԱ-ների ներկայությամբ կամ, եթե անհնար է ապահովել վերջիններիս ներկայությունը, ապա այդ աշխատանքներին պետք է մասնակցի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչը:

ներկայացված կադաստրային տվյալները կադաստրի ու քարտեզի և սեփականության վկայականի հետ: Հայտնաբերված անճշտություններն ու անհամապատասխանություններն առանձին հաշվետվությամբ և առաջարկվող լուծումներով պետք է ներկայացնել Հիմնադրամին:

7. Հիմնադրամին ներկայացված սխեմաները/քարտեզները կհամարվեն վերջնական, պետական գրանցումից և ՀՀ համապատասխան վկայական շնորհվելուց հետո կընդունվեն Հիմնադրամի կողմից: Եթե ԿԿ մերժում/կասեցնում է գույքի բաժանման կամ գրանցման գործընթացը, Կատարողը պարտավորվում է ուսումնասիրել և ներկայացնել ուղղված տարբերակը, ինչպես նաև ԱԵԱ-ների համար փոփոխությունների արդյունքում վերանայված փոխհատուցումների փաթեթը (ներառյալ նկարագրության արձանագրության, գնահատման հաշվետվության և տվյալների բազայի ուղղումը)՝ առանց լրացուցիչ վճարումների կամ ծախսերի փոխհատուցման:

8. Վերոգրյալ սխեմաները/քարտեզները կներկայացվեն դատարաններում դատական կարգով օտարման դեպքերի քննության ժամանակ: Կատարողը պատասխանատվություն է կրում չափագրումների արդյունքների ճշգրտության և հավաստիության համար մինչև օտարված գույքի իրավունքների պետական գրանցումը՝ դատարանի որոշման համաձայն:

III. *Կորուստների գույքագրում*

1. Իրականացնել ազդեցության ենթակա ամբողջ գույքի գույքագրում՝ հողակտորներ, շենքեր ու կառույցներ, այլ անշարժ գույք (մետաղական ցանկապատեր, վանդակաճաղեր, քարե ցանկապատեր և այլն), ենթակառուցվածքներ (կոյուղի, հաղորդակցման լարեր, գազատար կամ ջրագիծ և այլն), արձանագրելով գույքի իրավական կարգավիճակը և տեսակը, ինչպես նաև փաստացի օգտագործման նպատակը:

2. Իրականացնել ազդեցության ենթակա հողակտորների վրա առկա բոլոր ծառերի, թփերի, մշակաբույսերի ուսումնասիրություն և դրանք գրանցել ըստ որոշակի չափանիշների (օրինակ՝ ըստ տեսակի, տարիքի, ծառի բնի հաստության և այլն)[8]:

3. Հիմնադրամի կողմից տրամադրված փաթեթներում նշված բերքատու ծառերի կորուստների գնահատման հաշվետվություններում նշված ծառերի տարիքներին ավելացնել 2 տարի, և դրանց գնահատումը իրականացնել ՀՕՏԾ-ով նախատեսված բերքատու ծառերի միավոր արժեքներով[9]:

4. Վերլուծել ազդեցության ենթակա գույքը որպես եկամտի հիմնական աղբյուր հանդիսանալու վերաբերյալ տվյալները՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով հիմնավորող փաստաթղթեր:

5. Որոշել ազդեցության ենթակա ընդհանուր գույքի, մասնավոր, համայնքի կամ պետական գույքի քանակը և տարածքը՝ ըստ տեսակի:

6. Լուսանկարել ազդեցության ենթակա ամբողջ գույքը/ակտիվները և, ըստ անհրաժեշտության, նկարահանել դրանք:

7. Որոշել այլ կորուստների ծավալը և տեսակը, օրինակ՝ գործնական կամ այլ եկամուտ, աշխատանքային կամ այլ ակտիվներ, բիզնեսից ստացված ամսական զուտ եկամուտը ըստ հարկերի մասին պաշտոնական հայտարարագրի և այլն:

8. Ստուգել ազդեցության ենթակա հողակտորների և գույքի իրավական կարգավիճակը, վարձակալման տևողությունը և սեփականության իրավունքը:

9. Առանձնացնել ԱԵԱ-ներին՝ ըստ ունեցած կորուստների տեսակի (հողեր, կառույցներ, մշակաբույսեր, ծառեր, բիզնեսներ և այլն), ներառյալ այն ԱԵԱ-ներին, որոնք կորցնում են 10% կամ ավելի եկամուտ ապահովող գույք կամ վերջիններիս գույքը ֆիզիկապես տեղափոխվում է:

Գույքագրումը պետք է կատարվի թե՛ ամբողջ գույքի, թե՛ ազդեցության ենթակա մասի համար:

IV. *Ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրությունների պատրաստում և ստորագրում*

1. Պատրաստել ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրությունները, ներառյալ՝ չափագրումների արդյունքները, ազդեցությունների գույքագրումը

[8] Տվյալ առաջադրանքը պետք է դիտարկել միայն այն դեպքերում, եթե ՄԶՀ ընթացքում հայտնաբերվեն հողամասեր, որոնք նախկինում չեն ներառվել ՀՕՏԾ շրջանակներում, կամ Ծրագրի ԲԼՄ շրջանակներում ստացված բողոքների առկայության դեպքում, որը կարող է կազմել ընդհանուր հողամասերի 10%-ը:

[9] Քանի որ ՄԶՀ-ն իրականացվել է 2023 թ.-ին, իսկ ՀՕՏԾ իրականացումը մեկնարկելու է 2025 թվականին, որի շրջանակներում ազդակիր հողամասերը գնահատվելու են ներկայիս շուկայական արժեքով, անհրաժեշտ է հողամասերի վրա առկա ծառերի

(դիտարկումը) և մարդահամարը (նկարագրության արձանագրության ձևաչափը հաստատվել է ՀՀ կառավարության 16.09.2010թ թիվ 1275-Ն որոշմամբ):

2. Կազմակերպել բոլոր ԱԵԱ-ների, այդ թվում՝ սեփականատերերի, վարձակալների, չհաշվառված բնակիչների և այլ կողմերի կողմից գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրումը՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված արձանագրությունների կազմման և ստորագրման պահանջների մասին հրամանի համաձայն:

3. Ներկայացնել չստորագրված արձանագրությունները Հիմնադրամին համապատասխան հստակ պարզաբանումների հետ միասին՝ կցելով չստորագրման վերաբերյալ ակտերը (ակտերի ձևաչափը տրամադրում է Հիմնադրամը):

4. Թերությունների հայտնաբերման դեպքում դրանք ուղղել և ԱԵԱ-ներին ներկայացնել ուղղված արձանագրությունները՝ նորից ստորագրելու համար:

5. Աջակցել Հիմնադրամին գույքի նկարագրության ստորագրված արձանագրությունները բոլոր ԱԵԱ-ներին ներկայացնելու/ծանուցելու հարցում՝ տեղական կանոնակարգերի համաձայն:

*V. Տվյալների բազայի մշակում և կառավարում*

1. Կատարողի կողմից վերամշակված տվյալների բազան պետք է լինի ամբողջական՝ MS Excel ֆորմատով: Տվյալների բազա մուտք գործելը պետք է իրականացվի կրկնակի մուտքագրման ձևով: Էլեկտրոնային և տպագիր օրինակներում առկա տվյալները պետք է լինեն նույնը:

2. Տվյալների բազայի ձևաչափը (կառուցվածքը, մուտքագրվող տվյալները և այլն) պետք է տրամադրի Հիմնադրամը: Տվյալների բազան պետք է հնարավորություն ունենա տրամադրել ամփոփ տվյալներ և ՀՕՏԾ մոնիթորինգի և կառավարման նպատակների համար մշակված աղյուսակներ, որոնց ձևաչափը պետք է համաձայնեցնել Հիմնադրամի հետ:

3. Տվյալների բազայի սպասարկումը պետք է իրականացնի Կատարողը մինչև իր պայմանագրի ավարտը և ավարտական հաշվետվությամբ պետք է ներկայացնել Հիմնադրամի հաստատմանը:

4. Կատարողը պետք է Հիմնադրամի համար ապահովի տվյալների բազայի լիարժեք կառավարման և հասանելիության հնարավորություն:

*VI. Խորհրդատվություն, մասնակցություն և բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ)*

1. Աջակցել Հիմնադրամին նախաձեռնելու հանրային իրազեկման միջոցառումներ ազդեցության ենթակա համայնքներում՝ տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին ծանոթացնելու նպատակով,

2. Աջակցել Հիմնադրամին ձեռնարկելու յուրաքանչյուր ԱԵԱ-ի ծանուցումը՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն (այդ թվում ԱԵԱ-ին տեղեկատվության տրամադրում իրենց իրավունքների, պարտավորությունների և հողի օտարման վերաբերյալ պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ): Ծանուցման ձևերը, զրույցները և տեղեկատվական թերթիկները պետք է նախապես համաձայնեցնել Հիմնադրամի հետ:

3. Աջակցել Հիմնադրամին՝ կառավարելու Բողոքների լուծման մեխանիզմը ազդեցության ենթակա համայնքներում:

*VII. Առնչվող այլ հարցեր*

Կատարողը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի կողմից սահմանված ժամկետում իր մեղքով առաջացած սխալները իր հաշվին շտկելու համար, այն սխալները, որոնք հայտնաբերվել են ՀՕՏԾ իրականացման աշխատանքները ավարտելուց հետո, ինչպես նաև՝ մինչև բոլոր օտարված հողերը չգրանցվեն ԿԿ-ում:

*VIII. Այլ առաջադրանքներ*

Հաշվի առնելով ՀՕՏԾ առանձնահատկությունները՝ Կատարողը պետք է դիտարկի իր գործառույթները որպես մեկ ընդհանուր ծրագրի իրականացում և պետք է ճկունություն ցուցաբերի գործընթացի ընթացքում ծագած հնարավոր խնդիրներին լուծումներ առաջարկելու նպատակով, ինչը, եթե նույնիսկ բառացիորեն նշված չէ ծառայությունների տեխնիկական բնութագրում, կարող է բխել Կատարողի հիմնական գործառույթներից ու պարտավորություններից: Կատարողի գործողություններին ու պատասխանատվությանը առնչվող պայմանագրի պայմաններն ու ժամկետները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Սույն Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված մատուցվող

լրացուցիչ գործողություններն իրականացնում է մատուցվող ծառայությունների շրջանակի մինչև 10%-ի չափով: Սույն պայմանագրում փոփոխություններն իրականացվելու են ՀՀ գնումների օրենսդրության պահանջների համաձայն:

***Ծառայություններ մատուցող կազմակերպությանը ներկայացվող պահանջները***

Առաջադրանքի իրականացման շրջանակներում ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի որակավորված Կազմակերպության կողմից, որը կներկայացնի վերջին 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված միջազգային չափանիշներին համապատասխան 1 հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի մշակման պայմանագրի (համաձայնագրի) պատճենը: Ընդ որում հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում ազդակիր հողամասերի նվազագույն քանակը պետք է լինի առնվազն 400 հողամաս:

Նախկինում կատարված պայմանագիրը/համաձայնագիրը համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե պայմանագրային պարտավորությունները կատարվել են պայմանագրով նախատեսված պահանջների համաձայն, սահմանված ժամկետներում և կարգով, չկան խախտումներ և էական շեղումներ, առկա է երկկողմ հաստատված հանձնման-ընդունման ակտ/արձանագրություն և/կամ պատվիրատուի կողմից գրավոր հավաստում պայմանագրի պատշաճ կատարման վերաբերյալ:

Առաջադրանքի իրականացման շրջանակներում ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի առնվազն հետևյալ մասնագետների/աշխատակազմի ներգրավմամբ.

1. Սոցիալական զարգացման և տարաբնակեցման մասնագետ/Թիմի ղեկավար: Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն և 5-7 տարվա համապատասխան փորձ բազմաֆունկցիոնալ թիմի կառավարման և աշխատանքների համակարգման ոլորտում: Թեկնածուն պետք է ղեկավարի աշխատանքային թիմը և պատասխանատու լինի առաջադրանքների ընդհանուր իրականացման համար: Պետք է ունենա առնվազն 5 տարվա փորձ Հողերի օտարման և տարաբնակեցման հետ առնչվող աշխատանքներում: Թիմի ղեկավարը պետք է ունենա գիտելիքներ և հմտություններ ՀՀ-ում հողերի օտարման, ներառյալ ՀՕՏԾ նախապատրաստման և իրականացման աշխատանքներ իրականացնող կառույցների վերաբերյալ, ինչպես նաև ծանոթ լինի ԵՆԲ ԲՍՄՍՀ, ՎԶԵԲ ԲՍՔ ԿՊ 5 ու ԱԶԲ ԱՄՔ (2009) փաստաթղթերին և ուղեցույցերին: Անգլերենի իմացությունը պարտադիր է (գրավոր և բանավոր):
2. Չափագրման մասնագետ: Թեկնածուն պետք է ունենա որակավորման վկայական՝ տրված իրավասու պետական մարմնի կողմից և առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ: Պահանջվում է նմանատիպ ծրագրերում ներգրավված լինելու 5 տարվա մասնագիտական փորձ:
3. Գյուղատնտես: Թեկնածուն պետք է ունենա մագիստրոսի աստիճան գյուղատնտեսության ոլորտում և առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ: Պահանջվում է նմանատիպ ծրագրերում ներգրավված լինելու փորձ:
4. Սոցիալական անվտանգության մասնագետ: Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ կամ 5 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ: Սոցիոլոգը/սոցիալական զարգացման մասնագետը պետք է ունենա համապատասխան աշխատանքային փորձ և մասնագիտական գիտելիքներ՝ հողերի օտարման և վերաբնակեցման հետ կապված աշխատանքներում, ինչպես նաև սոցիոլոգիական/դաշտային հարցումների համակարգման ոլորտում:
5. Հարցազրուցավար: Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն: Թեկնածուն պետք է ունենա առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ՝ ցանկալի է որակական սոցիոլոգիական, մարքեթինգային կամ այլ հարակից դաշտային հարցումներում: Գյուղական համայնքներում աշխատանքային փորձը առավելություն է:
6. Տվյալների բազայի մասնագետ: Թեկնածուն պետք է ունենա բակալավրի աստիճան մաթեմատիկայի, վիճակագրության, սոցիալական գիտությունների կամ հարակից այլ ոլորտներում՝ ցանկալի է առնվազն 3 տարվա համապատասխան փորձով: Պահանջվում են Excel, Access և SPSS ծրագրերի հետ աշխատելու փորձ, ինչպես նաև տվյալների հավաքագրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման փորձ:

Առաջադրանքի իրականացման ընթացքում Կատարողը պետք է օգտագործի իր գրասենյակը, մեքենաները և սարքավորումները:

Մրցույթին մասնակցության հայտերը ներկայացնելիս կազմակերպությունը պարտավոր

համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս ինքնակենսագրականները, պահանջվող որակավորումը և կրթությունը հավաստող վկայականները, ինչպես նաև նախկինում կատարված պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Կատարողը Պատվիրատուին պարտավոր է գրավոր կերպով տեղեկացնել առաջադրանքում ընդգրկված որակավորում ունեցող մասնագետների փոփոխության կամ որակավորման դադարեցման վերաբերյալ:

*Հաշվետվությունների և արդյունքների ներկայացման ժամանակացույցը*

Կատարողը Պատվիրատուին պետք է ներկայացնի ստորև նշված հաշվետվություններն ու արդյունքները:

*Ա. Հաշվետվություններ*

Պատվիրատուին անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հաշվետվությունները՝

1. Նախնական հաշվետվություն, ներառյալ՝ Գործողությունների մանրամասն ծրագիր (ԳՄԾ)՝ յուրաքանչյուր առաջադրանքի համար նկարագրելով բոլոր մեթոդաբանությունները, գործողությունները և ժամանակացույցերը, աշխատուժը և առաջադրանքի մեկնարկից հետո 30 օրվա ընթացքում ներկայացվելիք հաշվետվությունների ընդհանուր նկարագիրը: ԳՄԾ-ն պետք է ներկայացնել՝ հիմք ընդունելով Հիմնադրամի հետ նախապես ստացված համաձայնությունները:

2. Ծառայությունների առաջընթացի ամսական հաշվետվություն

Ծառայությունների մատուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում Կատարողը Ծառայությունների մատուցման յուրաքանչյուր ամսվա համար մինչև ընթացիկ ամսվան հաջորդող ամսվա 15-րդ օրը պետք է ներկայացնի Առաջընթացի ամսական հաշվետվություն: Յուրաքանչյուր հաշվետվության մեջ պետք է ներկայացնել Կատարողի հիմնական պարտականություններից յուրաքանչյուրի հետ կապված Կատարողի իրականացրած աշխատանքները և առաջընթացը:

Առաջադրանքի իրականացման ընթացքում Կատարողը Առաջընթացի ամսական հաշվետվությունները պետք է ներկայացնի Հիմնադրամի հետ համաձայնեցված կառուցվածքով՝ հաստատված Նախնական հաշվետվության, ինչպես նաև Հիմնադրամի պահանջով առաջընթացի այլ հաշվետվությունների տեսքով:

3. Ծառայությունների ավարտման վերջնական հաշվետվություն (ներառյալ տվյալների բազա): Ծառայությունների ավարտման վերջնական հաշվետվության հայերեն տարբերակում պետք է ամփոփվեն Կատարողի իրականացրած Ծառայությունների կատարման հիմնական ցուցանիշների և առաջադրանքների վերաբերյալ արդյունքները: Տվյալների բազա (MS Excel ձևաչափով), որը ներառում է Կատարողի կողմից իրականացված աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալները, ինչպես նաև ազդեցության ենթակա յուրաքանչյուր գույքի փաթեթների թվային տարբերակները, որոնք առանձնացված են ըստ ID/կոդ-կոդերի: Ծառայությունների ավարտման վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացնել փոխհատուցման վերջին փաթեթից և վերջնական հաստատված տվյալների բազայի ներկայացումից հետո 20 օրվա ընթացքում:

*Բ. Արդյունքներ*

Ազդեցության ենթակա յուրաքանչյուր ակտիվի/հողակտորի համար փաթեթներ:

Փաթեթները իրենց մեջ պետք է ներառեն (ըստ անհրաժեշտության).

ա. ԱԵԱ-ների կողմից ստորագրված ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրությունը (պատճենների նվազագույն քանակը պետք է լինի սեփականատերերի, վարձակալների և չձևակերպված օգտագործողների քանակով և ևս մեկ օրինակ Հիմնադրամի համար) հիմնավորող փաստաթղթերով, ներառյալ ԱԵԱ-երի կողմից նկարագրության արձանագրությունը չստորագրելու պատճառների և նկարագրության արձանագրության ստորագրման ժամանակ ԱԵԱ-ների բացակայության վերաբերյալ ակտերը, եթե այդպիսիք առկա են:

բ. Ազդեցության ենթակա գույքի հատակագիծը, որն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԿ: Ազդեցության ենթակա յուրաքանչյուր հողակտորի ընդհանուր մակերեսի և առանձին հատվածների գծագրերը հողի վրա առկա շինությունների, ներառյալ ինքնակամ և վարձակալված հողատարածքների գծագրերի հետ միասին (վարձակալված և օտարված վարձակալված մասերը), ՀՀ ԿԿ պահանջներին համապատասխան՝ 2 օրինակից տպագիր

գ. ԱԵԱ-ների մարդահամարի իրականացման լրացված հարցաթերթիկի պատճենը, եթե առկա է: Կատարողը պետք է հաշվետու լինի անմիջապես Հիմնադրամին: Կատարողը պետք է հաշվետվությունները ներկայացնի հայերեն լեզվով էլեկտրոնային ու 2 թղթային տարբերակներով ուղեկցող նամակի հետ (եթե հաշվետվությունների ցանկում հատկորոշված չէ): Բոլոր գրավոր փաստաթղթերը (ներառյալ լուսանկարները), ակտերը, քարտեզները/ հատակագծերը, ինչպես նաև այլ համապատասխան նյութերը պետք է պատշաճ կերպով փաստագրվեն և տրամադրվեն 1 օրինակից յուրաքանչյուր միավորի համար:

**Հաշվետվություններ ներկայացնելու պահանջները և արդյունքները**

| No. | Հաշվետվության տեսակը | Օրինակների քանակ | Ներկայացման ժամկետ | Վճարման չափը տոկոսներով |
|---|---|---|---|---|
| Ա. Հաշվետվություններ | | | | |
| 1. | Նախնական հաշվետվություն | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Word և PDF ձևաչափերով՝ ուղեկցող գրության հետ միասին | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: | Պայմանագրի արժեքի 20 տոկոսի չափով |
| 2. | Առաջընթացի ամսական հաշվետվություններ | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Word և PDF ձևաչափերով հայերեն՝ ուղեկցող գրության հետ միասին | Յուրաքանչյուր հաջորդող ամսվա առաջին 15 օրվա ընթացքում | --- |
| 3. | Ծառայությունների ավարտման վերջնական հաշվետվություն, ներառյալ տվյալների բազա, որը ներառում է Կատարողի կողմից իրականացված աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալները | 2/2 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Word և PDF ձևաչափերով՝ ուղեկցող գրության հետ միասին: Տվյալների բազան՝ էլեկտրոնային՝ MS Excel տարբերակով: | Վերջին փոխհատուցման փաթեթի ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում: | Պայմանագրի արժեքի 20 տոկոսի չափով |
| Բ. Արդյունքներ | | | | |
| 1. | Առաջին փուլի ազդեցության ենթակա յուրաքանչյուր ակտիվի/հողակտորի համար փաթեթ (59[10]) | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Excel ձևաչափով՝ ուղեկցող գրության հետ միասին | Փաթեթների ամբողջական տրամադրումից հետո 10 օրյա ժամկետում | Պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով |
| 2. | Երկրորդ փուլի ազդեցության ենթակա յուրաքանչյուր ակտիվի/հողակտորի համար փաթեթ (119) | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Excel ձևաչափով՝ ուղեկցող գրության հետ միասին | Փաթեթների ամբողջական տրամադրումից հետո 10 օրյա ժամկետում | Պայմանագրի արժեքի 15 տոկոսի չափով |

[10] Այստեղ և հաջորդիվ փուլերում նշված ակտիվների/հողակտորների համար փաթեթների քանակը նշված է ըստ սույն ՏԱ «***Առաջադրանքի նպատակը և ծառայությունների շրջանակը***» բաժնում առկա աղյուսակի: Փաթեթները տրամադրվելու են ըստ նույն բաժնում նշված ծառայությունների շրջանակում ներառված աշխատանքների տեսակների և դրանց քանակների համապատասխան բաշխումով՝ ըստ փուլերի: Նշված քանակը ներառում է նաև ՀՀ սեփականություն հանդիսացող հողակտորներ, որոնց համար չափագրման և գույքագրման փաթեթներ չեն ներկայացվելու, եթե դրանց վրա որևէ չեն օգտագործումներ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | **Երրորդ փուլի ազդեցության ենթակա յուրաքանչյուր ակտիվի/հողակտորի համար փաթեթ** (310) | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Excel ձևաչափով՝ ուղեկցող գրության հետ միասին | Փաթեթների ամբողջական տրամադրումից հետո 10 օրյա ժամկետում | Պայմանագրի արժեքի 25 տոկոսի չափով |
| 4. | **Չորրորդ փուլի ազդեցության ենթակա յուրաքանչյուր ակտիվի/հողակտորի համար փաթեթ** (93) | 1 տպագիր օրինակ և էլեկտրոնային տարբերակ Excel ձևաչափով՝ ուղեկցող գրության հետ միասին | Փաթեթների ամբողջական տրամադրումից հետո 10 օրյա ժամկետում | Պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով |

| Հապավումներ |
|---|
| Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտե |
| Ազդեցության ենթարկված անձ |
| Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն |
| Ասիական զարգացման բանկ |
| Ասիական զարգացման բանկի անվտանգության մեխանիզմների քաղաքականություն |
| Բողոքների լուծման մեխանիզմ |
| Բնապահպանական և սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագիր |
| Բնապահպանական և սոցիալական քաղաքականության կատարման պահանջ |
| Գործողությունների մանրամասն ծրագիր |
| Եվրոպական ներդրումային բանկ |
| Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր |
| Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակ |
| Մանրամասն չափագրման հետազոտություն |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 02702598
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ՝ 900000909961
Գործադիր տնօրեն

_______________
Ա. Չերչինյան
/ստորագրություն/Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ԷՅ.ԷՄ» ՍՊԸ**

Հասցե՝ ք.Երևան, Եկմալյան 6, Բիզնես պալե, 4-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 00117479
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ՝ 220593330107000
Տնօրեն

_______________
Կ. Գևորգյան
/ստորագրություն/Կ.Տ.

*Հավելված 3*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*ՃԴ-ԳՀԾՁԲ-2025/04 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ ___________________ | հվհհ___________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » «        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*ՃՂ-ԳՀԾՁԲ-2025/04 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց
հայտը նախազգծած ներկայացուցիչ՝

_______________________________
ազգանուն, անուն

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

_______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*ՃԴ-ԳՀԾՁԲ-2025/04 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____________________-ի և _________________-ի միջև «--» 2025թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի միջև «--» 2025թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____________________________________________ _____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.